Արձանագրություն N 3

Առողջապահության նախարարության 2019 թվականի կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/18/1» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «07» «օգոստոս» 2019թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի անդամներ Ա. Պետրոսյան, Է. Կաբասակալյան

Հանձնաժողովի քարտուղար Հ. Սարգսյան
Բացակայում էր Մ.Յախշյանը:

1. Հայաստանի Հանրապետության ՊԵԿ հարցում ներկայացնելու մասին

(Ա. Պետրոսյան)

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով հարցում է ներկայացվել ՀՀ ՊԵԿ: Հարցման պատասխանը ստացվել է 06.08.19թ., ըստ որի «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ի, «Վիոլա», «Պրոմ Տեստ», «Էմ դի Ընդ Դի Ըլայենս», «Լինարե» և «ՍԴԴ Գրուպ» ՍՊԸ-ների ֆինանսական չափորոշիչները գնահատվել են բավարար: Իսկ «ՍԱՎ Գրուպ» ՍՊԸ-ի համար ՀՀ ՊԵԿ-ից ստացվել է տեղեկատվություն, ըստ որի ՍՊԸ-ն ուներ 4,000 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություն, որը գերազանցում է «ՍԱՎ Գրուպ» ՍՊԸ-ի գնային առաջարկի 1%-ը: Նույն օրը ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/18/1 ծածկագրով գնման ընթացակարգի քարտուղարը իր էլեկտրոնային փոստից և ARMEPS համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով տեղեկացրեց մասնակցին շտկել ամհամապատասխանությունը, համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ և 48-րդ կետերի: Նույն օրը «ՍԱՎ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացվեց ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված 30.07.2019թ-ի դրությամբ հարկային պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքը, ըստ որի «ՍԱՎ Գրուպ» ՍՊԸ-ն 30.07.2019թ. դրությամբ չուներ ժամկետանց հարկային պարտավորություններ (մեր հարցումը վերաբերում էր հայտերի բացման օրվա դրությամբ պարտավորություններին՝ 17.07.2019թ.): Ըստ ներկայացրած տեղեկանքի «ՍԱՎ Գրուպ» ՍՊԸ-ի ֆինանսական չափորոշիչները գնահատվել են բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին

(Ա. Պետրոսյան)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը՝ որոշվել էր առաջարկել առաջին տեղ զբաղեցնող մասնակիցներին ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը (առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը)՝ «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ի, «Վիոլա», «Պրոմ Տեստ», «Էմ դի Ընդ Դի Ըլայենս», «Լինարե», «ՍԱՎ Գրուպ» և «ՍԴԴ Գրուպ» ՍՊԸ-ների որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացվել են 05.08.19թ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

3. Ընթացակարգի ամփոփման մասին

(Ա. Պետրոսյան)

1. Հիմք ընդունելով մասնակիցների կողմից ներկայացված հայտերը, «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացությունը.

1. Որոշվեց «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/18/1» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել և հաղթողներ ճանաչել.

1.«Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ին՝ 16-20,23,27,28,30-35,38,39 և,40 չափաբաժինների մասով՝ 2,418,036 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:

2. «Վիոլա» ՍՊԸ-ին՝ ՝ 1, 4-10, 12-15, 21,22,26 և 29 չափաբաժինների մասով՝ 31,337,712 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:

3. «Լինարե» ՍՊԸ-ին՝ 2,3,54,55,56,57,59 և 60 չափաբաժինների մասով՝ 601,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:

4. «Պրոմ Տեստ» ՍՊԸ-ին՝ 36 և 37 չափաբաժինների մասով՝ 256,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:

5. «Էմ Դի ընդ Դի Ըլայենս» ՍՊԸ-ին՝ 41,42,43,44,45,46,47 և 48 չափաբաժինների մասով՝ 758,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:

6. «ՍԱՎ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին՝ 51,52 և 53 չափաբաժինների մասով՝ 178,800 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:

7. «ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին՝ 49 և 50 չափաբաժինների մասով՝ 194,988 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:

2. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը, **որոշվեց** «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/18/1» ծածկագրով գնման ընթացակարգի անգործության ժամկետ սահմանել 2019 թվականի օգոստոսի 9-ից մինչև 2019 թվականի օգոստոսի 13-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

3. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/18/1» ծածկագրով գնման ընթացակարգի 11,24,25,58,61,62 և 63-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Անդամներ՝ ---------- Ա. Պետրոսյան

---------- Է. Կաբասակալյան

Քարտուղար՝ ---------- Հ. Սարգսյան